ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պրազիլ։ — Այս ընդարձակ ամերիկեան կայսերութիւնն բովանդակ այս ամիս աշխարհի ուշադրութիւնն գրաւեց։ Պրազիլեան ժողովուրդը տեսնելով ինքզինքը կերպով մը կղզիացեալ դրից մէջ 'ի բովանդակ Ամերիկայի, շրջապատեալ 'ի բազմաթիւ յառաջադէմ և մեծահարուստ հասարակապետութեանց, անդիմադրելի փափագ մը զգաց նմանելու նոցա ըստ ամենայնի. և քիչ աւուրց մէջ կործանելով զգահն կայսերական, հրատարակեց իւր անկախ և ազատ հասարակապետութիւնն. սակայն այս մեծ յեղափոխութեան մէջ ամենամեծ դիտելու կէտն եղաւ իրենց գործելու հանդարտ և անխռով կերպը։ Մինչ այլ տերութեանց մէջ նմանօրինակ մեծամեծ յեղաշրջութիւնք տեղի կ'ունենան յետ բազմաճիր արիւնհեղութեանց և անթիւ երկպառակութեանց և կուսակցութեանց, անդ 'ի Պրազիլ՝ ամենայն ինչ կարծես մեքենաբար շարժեալ, կանոնաւոր ընթացք մ' ունեցաւ։ Երբ հրատարակուեցաւ այս նոր հասարակապետութիւնն, գրեթէ ամէն գաւառները յանձն առին զայն ուրախութեամբ, և իսկոյն ընդունեցան նորընտիր վարչութեան անդամներն։ Կայսերական ընտանիքը ըստ ամենայնի միշտ պատուեցաւ այն քիչ օրերուն մէջ, զորս դեռ կրցաւ վայելել մայրաքաղաքին մէջ. և երբ կը մեկնէր ծերունի կայսրն յաքսոր՝ ժողովուրդը մատոյց իրեն սովորական յարգանքը։ Այժմ պիտի դիմէ 'ի փորթուգալ։

Իտալիա։ — Նոյեմբեր 24ին 'ի Հռոմ բացուեցաւ խորհրդարանը, ըստ սովորութեան թագաւորն կարդաց թագի ճառը։ Այս ճառին գլխաւոր կէտերուն վրայ թէ ներքին և թէ արտաքին լրագիրք բազմաթիւ դիտողութիւններ ըրին։ Նախ ներքին լրագիրք այս տարուան ճառին ընդհանուր ոճին վրայ շատ գոհ եղան. վասն զի ուրիշ տարիներ աւելորդ երկարաբանութեամբք կը յիշէր թագաւորն մի առ մի մանրամասն ներկայացուելիք օրէնքները. այս տարի թողլով այս աւելորդաբանութիւնքը՝ յիշեց միայն գլխաւոր կէտերը. և նախ, Եւրոպայի ընդհանուր դիրքը նկատելով հաստատեց խաղաղութեան ստուգութիւնը. ափրիկեան քաղաքականութիւնը դրուատեց և իղձ յայտնեց աւելի ևս զայն ընդարձակելու. յիշեց նաև խորհրդարանին ներկայացուելիք բարեպաշտական հաստատութեանց վրայ դրուելիք կառավարչական միջամտութեան օրէնքը. և հուսկ ուրեմն յոյս յայտնեց, որ 'ի բարւոքումն երկուց ազգաց իսկ շահուց վերցուին տարբերական մաքսերը։ Այս վերջին կտորը գաղղիական մամլոյն մէկ մասն շատ խրոխտ կերպով ընդունեցաւ և չարաչար մեկնեց, սակայն խոհեմագոյն և արդարագոյն մասն ուրախութեամբ ընդունեցաւ։

digitised by A.R.A.R.@